

Մինչդեռ կառավարենց շատ գեղեցիկ կերպով
կ'երգէ, —

«Վիշն անձրեւին կը հեծէ երգիս վերայ, — միաւար
Վիշն անձրեւին կը հեծէ...»

Ահ, ի՞նչ անոյշ թախիծ է

Շոճիններուն մէջ, դաւար...

(ՏԱԽԻՂ ԵՒՈՂԵԱՆ, էջ 69):

3. «Թափառական, սրիկայ (էջ 20): (Ականջը
խօսի վազգէն Շուշանեանին):

4. «Ձայն մը, ձայներ» (նոյն): (Ականջը խօսի
չեմ յիշեր որո՞ւ):

5. «Ամփոփոխիս և շղիս գանձարան փակեալ,
պարտեզ... (էջ 41).

դուն ալ շարունակէ՛.

«Պարտեզ փակեալ, բոյր իմ հարսն, պար-
տեզ փակեալ և աղբիւր կնքեալ»:

(ԵՐԳ-ԵՐԳՈՑ ՍՈՂՈՄՈՆԻ. ԳԼ. Գ. 12).

6. «Դուռնակը մուշկ ու անուշ» (էջ 43) ուղ-
ղէ՛ անոյշ)

շարունակէ՛, «Շինականին քունն անոյշ:

7. «Կը հարուածեմ քեզ ծաղիկներով» (էջ 55)

Պարսիկ բանաստեղծութիւնը կ'ըսէ.

«Մի վերաւորեր կինը նոյն իսկ ծաղիկով մը.»

8. «Վազրի նման գայրագին ես» (էջ 59)

Պօտլէրեան բացատրութիւն,

9. «Հեռանալ, մոռանալ» (էջ 23). ականջը
խօսի Տէրեանի, Եւայն, Եւայն. մեր ժամանակը
չի ներեր ուրիշ դիտողութիւններով զբաղելու:

*
* *

Մինաս Թէօլէօլեանի երգերը ցուրտ են՝ շիր-
մաքարերու պէս: Մտի՞ են՝ ստորերկրեայ ճամ-
բաներու նման: Դատարկ են՝ վհատեցուցիչ կեր-
պով, անհամ են՝ անտանելի ըլլալու աստիճան:

Աջէն-ձախէն պատկերներ իրարու քով կը
բերէ, «մոզայիք», բայց ո՛չ Սուրբ Մարկոսի
տաճարին մէջ գտնուող «մոզայիք»ին նման, ի
սէր Աստուծոյ, ո՛չ: Երաժշտական ըլլալ կ'ուզէ,
բայց այդ մարզին մէջ՝ իրմէ շատ աւելի ճա-
շակաւոր և վարպետ տաղաչափ մը ունինք յառ-
ձին Գէորգ Կառավարենցի: Իր այս գործը «Նա-
խերգանք» մ'է, բուն երգը յետոյ պիտի գայ:
Ես լիկէտնի մէջ դասընկերներ ունէի, որոնք
շատ աւելի լաւ քերթուածներ գրած էին, սա-
կայն գանոնք հրատարակութեան չյանձնեցին:

Կրնամ սխալիլ (երանի՛ թէ սխալիմ և հայ

գրականութիւնը հարստանալ) բայց Մինաս Թէօ-
լէօլեանի առաջին երգերը զուարթարար ապա-
գայ չեն խոստանար, ևս այժմէն պատրաստ եմ
յայտարարելու թէ՛ ո՛չ միայն «Նախերգանք»ը,
այլ Թէօլէօլեանի ծնանելոց բոլոր երգերը չեմ
փոխեր իր չհաւնած Ալիշանի հետեւեալ երկու
տողերուն հետ:

«Ներ նահապետիդ տո՛ւր կակուղ հողիկ,
Որ զքեզ պի՛նդ սիրեց, հայոց աշխարհիկ»:

Այս յայտարարութիւնը ստիպուած էի ընելու,
եթէ նոյնիսկ Մինաս Թէօլէօլեան մեծ-հօրա-
քրոջս թոռնիկն ըլլար:

Ամէն բանէ առաջ իրմով երբեք պիտի չզբա-
ղէի՝ եթէ «Ազդարար»ի մէջ մեր մեծ ննջեցեալ-
մտաւորականները չարչարած չըլլար, ժխտական
գործ կատարելով կորսուելու վրայ եղող պու-
սահայ գաղութին մէջ:

Բայց վերջացնելէ առաջ իր «ինքնանկար»ը.

«Նստեցիք ժայռի մը վրայ, բացէ՛ք ձեր բե-
րանը աստղերուն, ու անոնցմէ հատ մը րոդ
իյնայ... (ձեր բերանին մէջ բնականաբար) Ապա
կանգնեցէք ձեր սիրածի սիրտին (ուղղէ՛ սրտին)
վրայ, գլուխը բարձր, ևսրնջածաղիկ մը շր-
քոնքիլ՝ ու ըսէք-

— «Պատերազմ կամ խաղաղութիւն»...
(էջ 85).

— «Ի՞նչ պարծենկոտութիւն, ի՞նչ պարծեն-
կոտութիւն, հաւուկդ իմ, ամածդ հաւկիթ մ'է,
և ձայնդ բոներ է արար-աշխարհ»...

(Ականջը խօսի ԱՐԱՅԻՆ):

ՀՐԱՉ ՔԱՉԱՐԵՆՑ

ՀԱՅՈՒՑ ԹԱՌԻ ԱՄԵՆԱՓԻԿԻՉԸ ԵՒ ՆՈՑՆԱՆՈՒՆ ՑՈՒ-
ՇԱՐՁԱՆՆԵՐ ՀԱՅ ԱՐՈՒՆՍՏԻ ՄԵՋ - Գրեց Գարեգին
Արքեպս. Յովսէփեանց, Երուսաղէմ. Տպարան Ս. Յա-
կոբեանց. 1937, Քառածալ, 110 էջ, 49 պատկերներով,
Թղթակազմ, գին չորս շիւն (մէկ տոլար):

Հեղինակին անունը արդէն իսկ գրաւական
մըն է գործին կարեւորութեան համար: Գարե-
գին Արքեպս.ի այս գործը «Իւր համառօտու-
թեամբ կարողացուած է նախապէս լենինգրադի
Նիւթական Կուլտուրայի Պատմութեան Ակադե-
միայում, և նուիրուած է նոյն հաստատութեան
նախագահ, նշանաւոր հայագէտ և մեծ աշխա-
տաւոր ակադեմիկ Ն. Մառի յիշատակին»: Իրա-
պէս արժանի յիշատակարան արժանի յիշատակի: